02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

42 (1441) • 8 նոյեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Խորհրդակցություն ոստիկանությունում

Նոյեմբերի 5-ին ոստիկանությունում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանը:

Ներկա էին ոստիկանության կոլեգիայի անդամներ, կենտրոնական ապարատի ստորաբաժանումների, տարածքային վարչությունների, բաժինների պետեր ու միջին խմբի ծառայողներ:

Արման Սարգսյանը ողջունելով ներկաներին՝ անդրադարձավ նախորդ օրը ոստիկանների կողմից կաշառք ստանալու դեպքին: Նա նշեց, որ ոստիկանությունը շարունակելու է ինքնամաքրման գործընթացը: Բազմիցս է հայտարարվել, որ ոստիկանությունում հանդուրժողականություն չի լինելու կոռուպցիոն ցանկացած դրսեւորման հանդեպ, օրենք խախտած յուրաքանչյուր ծառայող հայտնաբերվելու եւ ենթարկվելու է պատասխանատվության:

Շարունակելով կոռուպցիայի դեմ պայքարի թեման՝ Արման Սարգսյանը հորդորեց ոստիկանության ստորաբաժանումներին ակտիվացնել աշխատանքը կոռուպցիոն բնույթի հանցագործություններ բացահայտելու ուղղությամբ:

Խոսվեց հանցագործությունների շարժընթացի ու բացահայտումների դինամիկայի մասին: Արման Սարգսյանը մտագոհություն հայտնեց որոշ հանցատեսակների աճի համար եւ դրանց կանխման ու բացահայտման համար տվեց կոնկրետ ցուցումներ:

Արման Սարգսյանը Ճանապարհային ոստիկանության ու անձնագրային եւ վիզաների վարչության ղեկավար կազմին հորդորեց քաղաքացիներին մատուցել բարձրորակ ծառայություն:

Մարզ առ մարզ քննարկվեց օպերատիվ իրավիճակը, կոնկրետ դեպքերով տրվեցին հանձնարարականներ:

Ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանն ապօրինի ծառահատումների դեպքերը կանխելու, ինչպես նաեւ բացահայտելու ուղղությամբ հանձնարարեց ոստիկանության մի շարք ստորաբաժանումների շարունակել համագործակցված աշխատանքը՝ ներգրավելով նաեւ ոստիկանության այլ ծառայությունների աշխատակիցներին:

Խորհրդակցությանը քննարկվեցին նաեւ ոստիկանության գրագրությանը, օպերատիվ ծառայությանը, նյութատեխնիկական ապահովմանն ու կարգապահությանը վերաբերող խնդիրներ:

Կրակոցներ Նոր Նորքում

Նոյեմբերի 3-ին ոստիկանության Նոր Նորքի բաժին հաղորդում ստացվեց, որ Նոր Նորքի 9-րդ զանգված տանող ճանապարհին կրակոցներ են հնչել: Բաժնի օպերատիվ խումբն ու վարչական շրջանը սպասարկող պարեկային ոստիկանները հենց դեպքի վայրից բաժին բերման ենթարկեցին մի քանի երիտասարդի:

Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ Հունան Ավետիսյան փողոցում մի խումբ երիտասարդներ վիճել են ու խփել իրար: Այդ ընթացքում միջադեպի մասնակից 23-ամյա մի երիտասարդ գազային ատրճանակից մի քանի անգամ կրակել է օդ:

Ձերբակալվածի ծանոթներից մեկը իրավապահներին է ներկայացրել ատրճանակը, որից կրակոցներ էին արձակվել:

Հարուցվել է քրեական գործ: 23-ամյա երիտասարդը ձերբակալվել է:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումները շարունակվում են:

Դանակահարությունը բացահայտվեց

Նոյեմբերի 3-ին ոստիկանության Սեւանի բաժին հիվանդանոցից ահազանգ ստացվեց, որ կտրած-ծակած վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել սեւանցի մի երիտասարդ:

Սեւանի ոստիկանները օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզեցին, որ Սեւանի Կոմիսարների փողոցում 27 ու 23-ամյա երիտասարդներ վիճել էին: Միջադեպն ուղեկցվել էր ծեծկռտուքով, ինչն էլ հանգուցալուծվել էր 27-ամյա երիտասարդի դանակահարությամբ:

Բացատրական աշխատանքի շնորհիվ 23-ամյա երիտասարդը ներկայացավ բաժին ու խոստովանեց:

Հետագա միջոցառումներով հայտնաբերվեց նաեւ հանցագործության գործիք դանակը:

Կատարվում է քննություն:

Պետությանը պատճառվել էր 136 միլիոն դրամի վնաս

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով բացահայտվել է կոռուպցիոն բնույթի հերթական հանցագործությունը:

Փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ պետական գույքի կառավարման վարչության, ջրային տնտեսության պետական կոմիտեի եւ «Սեւան-Հրազդանյան-Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության նախկին պաշտոնատար անձինք թույլ են տվել ապօրինություններ:

Ըստ նախնական տվյալների՝ նրանք 2012-2013 թթ. կազմակերպել են «Սեւան-Հրազդանյան-Ջրառ» ՓԲ ընկերությանը պատկանած 6000 մետր երկարությամբ, 1420 մմ տրամագծով «Արեւշատի» առաջին աստիճանի պոմպակայանի մղման խողովակաշարի օտարման գործընթացը, որի շրջանակներում կազմել ու ներկայացրել են գույքի գնահատման համար հիմք հանդիսացած ելակետային տվյալների՝ քաշի, երկարության եւ մաշվածության վերաբերյալ կեղծ տեղեկանք: Արդյունքում՝ փաստացի շուրջ 2 հազար 086 տոննա խողովակաշարը ծեւակերպվել է որպես 1680 տոննա եւ օտարվել ՍՊ եւ ՓԲ ընկերություններին: Պետությանը պատճառվել է 136 միլիոն դրամի վնաս՝ անզգուշությամբ առաջացնելով ծանր հետեւանքներ:

Հարուցվել է քրեական գործ:

Դանակահարել էր երկու երիտասարդի

Հոկտեմբերի 29-ի երեկոյան կտրած-ծակած վնասվածքներով հիվանդանոց էին տեղափոխվել 17 եւ 18 տարեկան երկու երիտասարդ: Մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ նրանք հիվանդանոց են տեղափոխվել Մասիս քաղաքից: Երիտասարդների հետ զրուցել չհաջողվեց. ի վիճակի չէին բացատրություն տալու:

Ձեռնարկված միջոցառումներով Մասիսի քրեական հետախույզները պարզեցին կատարվածի մի շարք հանգամանքներ: Մասիսի դպրոցներից մեկի բակում ծագած վիճաբանության ընթացքում Մխչյան գյուղում ապրող մի երիտասարդ դանակահարել էր մյուս կողմին: Բացատրական աշխատանքի արդյունքում նա ներկայացավ ոստիկանության Մասիսի բաժին:

Կատարվում է քննություն:

Հայտնաբերվել է ոչ սթափ 70 վարորդ

Հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 3-ը ճանապարհային ոստիկանության 1-ին սպայական գումարտակի ծառայողներն ուժեղացված ծառայություն են իրականացրել մայրաքաղաքում՝ պահպանվող հատուկ տարածք տեղափոխելով 192 մեքենա, որոնցից 35-ի վարորդները եղել են ալկոհոլի ազդեցության տակ, մյուս վարորդները կա՛մ չեն ունեցել համապատասխան փաստաթղթեր, կա՛մ թույլ են տվել ճանապարհային երթեւեկության կանոնների կոպիտ խախտումներ:

Նույն ժամանակահատվածում մարզերում ուժեղացված ծառայություն են իրականացրել ճանապարհային ոստիկանության երկրորդ սպայական գումարտակի ծառայողները. պահպանվող հատուկ տարածք են տեղափոխվել 56 մեքենա: 35-ի վարորդները եղել են ոչ սթափ վիճակում: Հայտնաբերվել է նաեւ առանց համարանիշերի շահագործվող՝ 2, առանց ԱՊՊԱ պայմանագրի՝ 86, թաղանթապատ դիմապակիով՝ 81 տրանսպորտային միջոց: 42 վարորդ տուգանվել է երթեւեկելիս մեքենայից փողոց իրեր նետելու համար:

Խուլիգանություն ոստիկանությունում



Բաժանմունք ներխուժած անձինք ձերբակալվել են, իսկ հրավառություն իրականացնողը տուգանվել է:

էջ 2

Խաբելու «արհեստը»

Զրույցի բռնվեցին, խոսքից խոսք բացվեց, ու ինչ-որ պահի կինը սիրտը բացեց նորածանոթի մոտ:

էջ 3

70-ամյա մարդասպանները

Տարեց մարդասպանները երիտասարդ զոհերին հիմնականում սպանել էին ծոծրակին կրակելով:

էջ 5

Օպերատիվ

Կոռուպցիոն դրսեւորումներ, ապօրինի վճարումներ եւ վաշխառություն

Հանրապետության փողոցներում, գետնանցումներում, նաեւ համացանցում կարելի է հանդիպել գաղթակղիչ վերնագրերով գովազդների: Օրինակ՝ «Արագ գումար», «Դեշտ վարկեր» եւ այլն:

Ըստ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության օպերլիազոր Հայկ Սարգսյանի՝ նման հայտարարությունները, հիմնականում՝ խաբեություններ են, որոնք դրսեւորվում են տարբեր եղանակներով. «Քաղաքացիները զանգում են նշված հեռախոսահամարով, մեկնում կազմակերպությունների կամ անհատների կողմից նշված վայր, ինչից հետո պայմանները փոխվում են: Քաղաքացիներին առաջարկվում է գնալ բջջային հեռախոսների, կահույքի, շինանյութի կամ կենցաղային տեխնիկայի մասնագիտացված խանութներ, ձեւակերպել ապառիկ գնումներ: Ապառիկ եղանակով ձեռք բերված ապրանքները տրամադրում են այդ ընկերությանը կամ անհատին: Հետո առաջարկվում է սպասել որոշ ժամանակ, որպեսզի գնված ապրանքը վաճառվի եւ գոյացած գումարի յոթանասուն կամ հիսուն տոկոսը վերադարձվի քաղաքացուն: Բայց նախատեսված ժամանակում այդ գումարը չեն տալիս քաղաքացիներին կամ վերադարձնում են մասնակի, իսկ վարկի մարման ամբողջ բեռը մնում է քաղաքացու ուսերին»:

Նման կազմակերպությունները, բնականաբար, չունեն լիցենզիա, չեն համագործակցում բանկերի ու վարկային կազմակերպությունների հետ, նրանց գործունեությունը չի վերահսկվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Ըստ ոստիկանության կապիտան Հայկ Սարգսյանի՝ խարդախությունները դրսեւորվում են նաեւ այլ եղանակներով. «Քաղաքացին վարկ ստանալու նպատակով դիմում է անհայտ ծագման ինչ-որ կազմակերպության: Այդ կազմակերպությունը, որպես վարկային միջնորդ, դիմում է բանկին, ստանում քաղաքացուն հասանելիք գումարը, նրան տրամադրում է այդ գումարի մի մասը, մյուս մասը, որպես միջնորդ, մնում է կազմակերպությանը: Այս դեպքում նույնպես վարկի մարման ողջ բեռը մնում է քաղաքացու վրա»:

Վերջերս օրենսդիր մարմինն ընդունել է օրենք՝ լիցենզիա չունեցող անձանց կամ կազմակերպությունների կողմից վարկերի գովազդի իրականացման մասին: Առանց համապատասխան լիցենզիայի անձանց եւ կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման գովազդ իրականացնելու համար նախատեսվում է 2 միլիոն դրամ տուգանք:

Ներկայացվածի մասին քաղաքացիներից, բանկերից ու լրատվամիջոցներից ոստիկանությունում ստացվում են բազմաթիվ ահազանգեր ու բողոքներ: Նմանատիպ դեպքերը բացահայտելուց զատ, վարկերի ձեւակերպման ժամանակ առաջացող կոռուպցիոն դրսեւորումների, ապօրինի վճարումների եւ վաշխառության դեպքերի կանխարգելման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա ստեղծվել է օպերատիվ աշխատանքային խումբ: Խմբում ներգրավված են ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության տարբեր ստորաբաժանումների ծառայողներ: Նրանց աշխատանքի շնորհիվ միայն այս տարվա հուլիս-սեպտեմբեր ամիսներին նման եղանակով խարդախություն կատարելու դեպքերի առթիվ ոստիկանությունում նախապատրաստված նյութերով հարուցվել է 54 քրեական գործ:

Ոստիկանությունը հորդորում է չլիցենզավորված անձանց ու կազմակերպություններին՝ չզբաղվել հակաօրինական գործունեությամբ, իսկ քաղաքացիներին խորհուրդ է տրվում վարկային գործարքներ իրականացնել միայն լիցենզավորված, ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության տակ գտնվող բանկերի ու կազմակերպությունների հետ:

Հնչողություն ստացած գողությունը բացահայտվեց

Հոկտեմբերի 21-ի ժամը 14-ից մինչեւ հաջորդ օրը՝ ժամը 11.30-ն ընկած ժամանակահատվածում կոտրել էին «Սիրահարների այգու» հարեւանությամբ կայանված ԱԺ մի պատգամավորի «Մինի Կուպերի» ապակին եւ սրահից գողացել դրամապանակը:

Համացանցում հնչողություն ստացած այս դեպքը բացահայտելու ուղղությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում ոստիկանության Երեւան քաղաքի վարչությունում օպերատիվ տեղեկություններ ստացվեցին: Նույն վարչության քրեական հետախուզության բաժնի ու ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները հոկտեմբերի 29-ին, գողություն կատարելու կասկածանքով, Անդրանիկի փողոցից ոստիկանություն բերման ենթարկեցին երկու տղամարդու:

Բերման ենթարկված 30-ամյա տղամարդը խոստովանեց կատարածը: Կասկածյալի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց ծխախոտի գլանակի մեջ լցված դեղնականաչավուն թմրանյութի նմանվող զանգված, ինչպես եւ այն առարկաները, որոնցով կոտրել էր մեքենաների ապակիները:

Ձեռնարկված միջոցառումներով պարզվեց, որ, բացի նշված գողությունից, բերման ենթարկվածը օգոստոս, հոկտեմբեր ամիսներին, «Սիրահարների այգու» հարեւանությամբ, նույն եղանակով, կատարել էր եւս մի շարք գողություններ՝ հափշտակելով պայուսակներ, դրամապանակներ, փող ու փաստաթղթեր: Այդ դեպքերի առթիվ արդեն իսկ հարուցվել են քրեական գործեր:

Հոկտեմբերի 21-ին կատարած գողության առթիվ նյութեր են նախապատրաստվում: Հանգամանքները պարզվում են:

Խուլիգանություն ոստիկանության բաժնումնքում

Նոյեմբերի 2-ին ոստիկանները Վրացյան փողոցից, ժամը 23-ից հետո հրավառություն իրականացնելու կասկածանքով, ոստիկանության Մարաշի բաժնմունք են բերել մի քաղաքացու:

Ոստիկանության Մարաշի բաժնմունք են ներխուժել բերված քաղաքացու երկու ազգական: Նրանք տեւական ժամանակ հնչեցրել են հայհոյանքներ, աղմկել են, խփել ոստիկաններին, չեն ենթարկվել իրավապահների օրինական պահանջներին՝ խաթարելով բաժանմունքի բնականոն աշխատանքը:

Ոստիկանության ծառայողները կիրառելով ֆիզիկական ուժ՝ նրանց տեղափոխել են աշխատասենյակներ:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ խուլիգանության եւ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու հատկանիշներով:

Բաժանմունք ներխուժած անձինք ձերբակալվել են, իսկ հրավառություն իրականացնողի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն եւ ազատ արձակվել:

Հիշեցնենք, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի» 180-րդ հոդվածը սահմանում է, որ գիշերային ժամերին (ժամը 23.00-ից մինչեւ ժամը 7.00-ն) հրագործական արտադրատեսակներ օգտագործելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ 100 հազար դրամի չափով:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

www.police.am

Ոստիկանությունը ինքնամաքրվում է

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ մի քաղաքացու հաղորդման առթիվ նախապատրաստված նյութերի ընթացքը նրա օգտին լուծելու համար, ոստիկանության էրեբունու բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի ավագ տեսուչը եւ տեսուչը հետաքննիչի հետ բանակցելուց հետո, քաղաքացուց որպես կաշառք պահանջել են 200 դոլար, ապա սակարկությունների արդյունքում պայմանավորվել են 50 հազար դրամի շուրջ:

Նոյեմբերի 4-ին Ազատության պողոտայում որպես կաշառք պահանջված 50 հազար դրամը ստանալուց անմիջապես հետո համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչը բռնվել ու բերման է ենթարկվել ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչություն: Անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 50 հազար դրամ կաշառքը:

Դեպքի առթիվ ոստիկանությունում քրեական գործ է հարուցվել եւ ուղարկվել հատուկ քննչական ծառայություն:

Նախաքննությունը շարունակվում է:

Հափշտակել էր 15 հազար դոլար

Հոկտեմբերի 25-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում կողոպուտի վերաբերյալ հաղորդում էր ստացվել: Կիեւյան փողոցի շենքերից մեկի վերելակի մոտ հափշտակել էին մի տղամարդու դրամապանակը, որի մեջ եղել էր 15 հազար դոլար ու 44 հազար դրամ:

Արաբկիրի քրեական հետախույզների բացահայտման աշխատանքին միացան ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները: Համատեղ աշխատանքի արդյունքում ոստիկանները պարզեցին հանցագործությունը կատարելու մեջ կասկածվողի ինքնությունը: Հոկտեմբերի 27-ին Եղվարդի բնակիչ, 39-ամյա տղամարդը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Արաբկիրի բաժին: Նրա խուզարկությամբ գողոնի մի մասը հայտնաբերվեց:

Բերման ենթարկվածը ներկայացվել է դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

Քննությունը շարունակվում է:

Գողություն միկրոավտոբուսում

Նոյեմբերի 1-ին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում մի կին հաղորդում էր տվել, որ միկրոավտոբուսում գողացել են դրամապանակը, որի մեջ եղել է փող եւ արծաթյա զարդեր:

Քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողությունը կատարել է Դրոյի փողոցի 62-ամյա մի բնակչուհի: Ոստիկանների բացատրական աշխատանքի շնորհիվ նա ներկայացել է ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին, տվել խոստովանական բացատրություն եւ ներկայացրել գողոնը:

Նախապատրաստվում են նյութեր:

Կրակոց գազային ատրճանակից

Նոյեմբերի 3-ի գիշերը 56-ամյա մի տղամարդ ոստիկանության Արմավիրի բաժնում հաղորդում է տվել, որ Երասխահուն գյուղի 67-ամյա մի բնակիչ իր տան բակում, վիճաբանության ժամանակ, ատրճանակից կրակել է իր դեմքին, ինչի հետեւանքով ինքը շշմել է եւ մի պահ կորցրել տեսողությունը:

Երասխահունի բնակիչը հրավիրվել է բաժին, ներկայացրել իր անվամբ գրանցված գազային ատրճանակը եւ տվել բացատրություն:

Նախապատրաստվում են նյութեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Խարդախ «արհեստ»

Խարդախությունը շա՛տ հին «արհեստ» է: Մարդը խաբել է սկսել անհիշելի ժամանակներից: Ընդ որում՝ այն ժամանակներում եւս խարդախն արժանի պատիժ էր ստանում: Ասել է թե՝ երեւույթը, որպես այդպիսին, էն գլխից էլ մերժելի է եղել, քրեորեն պատժելի արարք, ինչպիսին շարունակվում է մնալ նաեւ մեր օրերում:

Այս մասին, թերեւս, բոլորը գիտեն: Իսկ ավելի լավ նրանք, ովքեր մի քանի անգամ խարդախել ու համապատասխան պատիժ են կրել: Բայց համարյա միշտ լսում ենք, թե ինչպես սրան կամ նրան խաբեցին, երբեմն ականատես ենք լինում խաբվածի տառապանքներին...

Հիսունհինգամյա Սուսաննայի խելքը Մարինե Վիրաբյանը այնպես էր «կերել», որ նա, առանց երկար-բարակ մտածելու, քսան հազար դոլարը վստահեց նրան, որպեսզի երեքսենյականոց բնակարան դասավորեր որդու համար: Հիմա այս դյուրահավատը դատական գործընթացների մեջ է ու ամենեւին հույս չունի, որ Մարինեից իր փողը հետ կստանա: Մարինեն իր նման քանիսի՞ն է խաբել, ու դեռ քանի՛ խաբվածներ են սպասում իրենց կորցրած գումարների վերադարձին...

Մարինե Վիրաբյանը նախկինում երկու անգամ դատապարտվել է: Խարդախությա՞ն համար: Վերջին անգամ մեղադրյալի աթոռը «զբաղեցրել էր» հինգ տարի առաջ: Ազատվել էր պայմանական-վաղաժամկետ: Ազատվել ու շարունակել էր խարդախությամբ զբաղվել, մարդկանց վստահությունը չարաշահել: Դա այլեւս նրա կենսակերպն էր, այդ «արհեստի» շնորհիվ միշտ էլ լավ էր ապրել՝ ապահովված, բարեկեցիկ:

Կալանավայրը թողնելուց հինգ տարի անց Մարինե Վիրաբյանը նոր զոհ գտավ: Զբոսայգու նստարանին ամռան զով երեկոն էին վայելում: Զրույցի բռնվեցին, խոսքից խոսք բացվեց, ու ինչ-որ պահի Սուսաննան սիրտը բացեց նորածանոթի մոտ:

Այդ օրը Սուսաննան տրամադրություն չուներ: Դարձյալ վիճել էր հարսի հետ: Ավագ որդու «լեզվանի» կնոջ հետ ոչ մի կերպ լեզու չէր գտնում, ու միակ ելքը առանձնանալն էր: Հենց այդ հարցում էլ իր օգնությունն առաջարկեց Մարինեն:

Նախ իմացավ, որ Սուսաննան ընդամենը քսան հազար դոլար ունի, ինչը շատ քիչ էր երկու զավակի տեր որդու համար անգամ երկուսենյականոց բնակարան գնելու համար: Մարինեն մատը հենց Սուսաննայի «ցավոտ» կետին դրեց: Ասաց, որ իր պաշտոնյա բարեկամը կարող է այդ հարցը լուծել. Սուսաննայի որդուն իրենց աշխատակից կծեւակերպեն եւ կմտցնեն առաջնահերթ բնակարան ստացողների ցուցակի մեջ: Ու այդ «լավության» գինը հենց քսան հազար դոլար էր:

Գտնված հնարավորություն էր ու այն ձեռքից բաց թողնելը՝ հիմարություն: Եվ Սուսաննան խնդրեց, որ Մարինեն դասավորի իր որդու բնակարանի գործը: Մարինեին էլ հենց դա էր պետք: Խոստացավ օգնել:

Պայմանավորվեցին հանդիպել հաջորդ օրը՝ Սուսաննայի տանը: Մարինեն փողով ծրարը վերցրեց ու հավատացրեց, որ ամեն ինչ Սուսաննայի ուզածով կլինի: Իսկ երկու-երեք օր անց զանգեց, թե՝ մեկ ամսից որդիդ բնակարանատեր կդառնա:

Մեկ ամիսը դարձավ երկու, երեք, չորս... Մի օր էլ Սուսաննան ընդհանրապես կորցրեց Մարինեին: Բառի բուն իմաստով կորցրեց: Մարինեն ոչ զբոսայգում էր լինում, ոչ էլ հեռախոսն էր հասանելի:

Խաբված կնոջ միակ ելքը ոստիկանություն դիմելն էր: Իր համար անհասանելի Մարինեն շուտով քրեական հետախույզների համար դարձավ հասանելի:

Խարդախության փաստով քրեական գործ է հարուցվել:

Նախաքննությունը շարունակվում է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Նախկին ղեկավարի ապօրինությունները

Ըստ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով ձեռք բերված տվյալների՝ Վանաձորի նախկին համայնքապետը բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերել մի քաղաքացու հետ, ապա կազմակերպել է Վանաձորի կեղտաջրերի մաքրման նախկին կայանի օտարման գործընթաց: Քաղաքացուն աճուրդում հաղթող ճանաչելու անձնական շահագրգռվածությունից դրդված՝ 2010 թ. հուլիսի 30-ին համայնքի նախկին ղեկավարը կայանի շինությունների աճուրդային վաճառք կազմակերպելու մասին որոշում է հաստատել: Պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելով՝ կազմել եւ հաստատել է աճուրդի նիստ անցկացնելու մասին պաշտոնական կեղծ փաստաթղթեր: Ըստ այս պահին հայտնի տվյալների՝ 2010 թ. սեպտեմբերի 16-ին կնքված առուվաճառքի պայմանագրով շուրջ 240 միլիոն դրամով անշարժ գույքը օտարվել եւ անհամեմատ ցածր գնով՝ մոտ 63 միլիոն դրամի դիմաց անցել է իբր աճուրդում հաղթած հիշյալ անձին: Արդյունքում՝ պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ մոտ 176 միլիոն դրամի վնաս: Գործընթացին զուգահեռ, ավագանու որոշմամբ, համայնքի նախկին ղեկավարին հանձնարարվել է Վանաձորի կեղտաջրերի մաքրման կիսակառույց կայանի Լոռվա խճուղուն հարակից ստորգետնյա խողովակները ապամոնտաժել, պահեստավորել, ապա դրանց տնօրինման նպատակով ավագանու որոշման նախագիծ ներկայացնել: Սակայն համայնքի նախկին ղեկավարը, հափշտակություն կատարելու դիտավորությամբ, դեռեւս չպարզված անձանց միջոցով ապամոնտաժել է 3150 մետր երկարությամբ մեկուկես մետր տրամագծով եւ մոտ 295 միլիոն դրամի խողովակները: Այն ողջ ծավալով հայտնաբերվել է հոկտեմբերի 25-ին՝ մի ձեռնարկության առանձնացված ստորաբաժանումում, որը տվյալ ժամանակահատվածում կառուցվել է համայնքի նախկին ղեկավարին եւ նրա եղբորը պատկանող ընկերության միջոցով:

Պարզվել է նաեւ, որ համայնքի նախկին ղեկավարը 2014 թ. դեկտեմբերին հայտարարել է Լոռվա խճուղում գտնվող շուրջ 4000 քմ մակերեսով տարածքում տրանսպորտի եւ կոմունալ ենթակառուցվածքների կառուցապատման նպատակով՝ 5 տարի վարձակալական ժամկետով մրցույթ: Պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելով՝ նա կազմել եւ հաստատել է աճուրդի նիստ անցկացնելու մասին պաշտոնական կեղծ փաստաթղթեր: Արդյունքում, ըստ այս պահին հայտնի տվյալների, 2015 թ. հունվարին կնքված համապատասխան պայմանագրով՝ ամսական 166 հազար դրամ վարձավճարով, անշարժ գույքն անցել է փաստացի համայնքի ղեկավարին ու նրա եղբորը պատկանող ընկերությանը: Արդյունքում՝ համայնքի շահերին պատճառվել է էական վնաս:

Հարուցվել է քրեական գործ:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Բացահայտում են Արաբկիրի ոստիկանները

Հոկտեմբերի 24-ին ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, իրացնելով ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ ստացված օպերատիվ տվյալները, Շենգավիթ վարչական շրջանում հայտնաբերեցին ու կասկածանքով բերման ենթարկեցին Երեւանի բնակիչ, 54-ամյա մի տղամարդու:

Բերման ենթարկվածի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց մեթամֆետամին թմրամիջոցի նմանվող զանգված: Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ հայտնաբերված զանգվածը տղամարդը բերել էր Իրանից:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզների տեղեկություններով՝ տղամարդը Իրանից այլ թմրամիջոցներ էլ էր բերել, որոնք պահում էր տանը: Բերման ենթարկվածի բնակարանի զննությամբ հայտնաբերվեցին հաշիշի եւ մարիխուանայի նմանվող զանգվածներ: Բացատրական աշխատանքի արդյունքում տղամարդը Արաբկիրի քրեական հետախույզներին ներկայացրեց նաեւ 60 գրամից ավելի ափոնի նմանվող թմրամիջոց:

Նշանակվել են դատաքիմիական փորձաքննություններ:

Քննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Բռնվեց գողությունից որպեսզի անց

Հոկտեմբերի 22-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում օպերատիվ կառավարման կենտրոնից հաղորդում էր ստացվել, որ որպեսզի առաջ թիվ 30 երթուղու ավտոբուսում ուղեւորներից մեկի գրպանից գողացել են դրամապանակ, որի մեջ եղել է փող:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները գողությունը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկեցին: Բացահայտման աշխատանքներին միացան նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի 6-րդ բաժանմունքի ծառայողները, եւ համատեղ աշխատանքի շնորհիվ գրպանահատը հայտնաբերվեց:

Քրեական հետախույզները Բաղրամյան պողոտայից, գողություն կատարելու կասկածանքով, ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկեցին Ամիրյան փողոցի 31-ամյա մի բնակչի, որը տվել է խոստովանական բացատրություն:

Նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Հրդեհը

Հոկտեմբերի լույս 28-ի գիշերը ոստիկանության Լոռու մարզային վարչությունից Թումանյանի բաժին հայտնել էին, որ Օձուն գյուղում բնակիչներից մեկի տան տանիքն այրվում է:

Ահազանգով մեկնել էր Լոռու մարզի հրշեջ փրկարարական ծառայության երեք մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել եւ մարվել էր առավոտյան:

Հրդեհի հետեւանքով ամբողջությամբ այրվել էր Ռուսաստանում ապրող օձունցու տունը, հետո հրդեհը տարածվել էր նույնպես ռուսաստանաբնակ եղբոր կից տան տանիք, որն այրվել էր մասամբ:

Ոստիկանության աշխատակիցների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ առանձնատները հրկիզել է նույն գյուղի բնակիչ, 45-ամյա մի տղամարդ: Նա տվել է խոստովանական բացատրություն:

Փաստով նախապատրաստվում են նյութեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ծանոթը՝ համացանցից

Գյումրեցի Արեւիկ Կարապետյանը սոցիալական կայքով շփվում էր ծանոթների հետ: Լավ հարթակ էր կապի մեջ լինելու, միմյանց մասին տեղեկանալու համար: Նաեւ մարդկանց հետ էր ծանոթանում: Այդպես Գուրգեն Հայրապետյանը դարձավ վիրտուալ ընկերը: Համարյա ամեն օր զրուցում էր Արեւիկի հետ, հարց ու փորձ անում, թե ինչով է զբաղվում, ինչ նախասիրություններ ունի: Գուրգենը գիտեր կանանց հետ շփվելու նուրբ արվեստը, եւ Արեւիկը դարձավ նրա ամենօրյա զրուցակիցը:

Արեւիկը աշխատում էր քոլեջում, ինչի մասին տեղեկացավ Գուրգենը եւ որոշեց օգտվել այդ հանգամանքից: Խնդրանքով դիմեց Արեւիկին, թե հեռախոսի էկրանը վնասել է, բայց նորը գնելու փող չունի:

Մի խոսքով՝ խնդրեց Արեւիկին՝ նրա անունով ապառիկ հեռախոս գնել՝ խոստանալով ամիսների ընթացքում պարտաճանաչ վճարել պարտքը: Արեւիկը վստահելով վիրտուալ ծանոթին՝ խոստացավ օգնել:

Օրեր անց Գուրգենը Երեւանից ուղեւորվեց Գյումրի եւ հանդիպեց ծանոթուհուն: Դեսից-դենից զրուցեցին, կատակեցին, հետո Գուրգենը խոսեց հեռախոսի մասին՝ կրկին խոստանալով բանկային պարտավորությունները կատարել «սրբորեն»: Գնացին խանութ. Գուրգենը ընտրեց 200 հազար դրամ արժողությամբ հեռախոս, ինչը ձեւակերպվեց Արեւիկի անունով: Ըստ ժամանակացույցի՝ Գուրգենը պետք է ամեն ամիս վճարեր 14 հազար դրամ, սակայն խոստումը չկատարեց, եւ Արեւիկը հայտնվեց անհուսալի վարկառուների ցուցակում: Իսկ Գուրգենը դադարեցրեց շփումը Արեւիկի հետ. բաժանորդը համառորեն չէր պատասխանում զանգերին: Անգամ սոցիալական կայքից էր անհետացել:

Անելանելի վիճակում հայտնված Արեւիկը ոստիկանության Կումայրիի բաժնում կատարվածի վերաբերյալ հաղորդում տվեց: Իրավապահների ձեռնարկած միջոցառումների արդյունքում Գուրգեն Հայրապետյանը հայտնաբերվեց եւ հանգրվանեց ոստիկանությունում: Նախաքննության ընթացքում պարզվեց, որ Գուրգենը հեղինակել է նմանատիպ եւս մի քանի դրվագ: Սոցիալական կայքերով ծանոթացել էր կանանց հետ, ապա ընկերանալով՝ անցել գործի: Ապառիկ կարգով բջջային հեռախոսներ եւ պլանշետ էր վերցրել նրանց անուններով, իսկ բանկային պարտավորությունները չէր կատարել:

Հարուցված քրեական գործով կատարվում է քննություն:

Կախվածություն

Սեպտեմբերի 4-ին, ապօրինի թմրամիջոց պպտրաստելու, պահելու, օգտագործելու կասկածանքով, ոստիկանության Կումայրիի բաժին բերման ենթարկվեց գյումրիաբնակ Վաղարշակ Գալստյանը: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց պոլիէթիլենային փոպրակ, որի մեջ առկա էր բամբակե խծուծ՝ ներծծված գորշ, յուրահատուկ հոտով զանգվածով:

Վաղարշակը չթաքցրեց թմրամոլ լինելը: Եթե ցանկություն էր ունենում, ապա մի քանի բաղադրիչ հայթայթելով՝ կիսավեր շինություն էր շտապում ու թմրանյութ պատրաստում: Այդ անգամ էլ կողեին էր պատրաստել, բայց գործածել չհասցրեց:

Վաղարշակ Գալստյանի արարքում առկա է քրեական օրենսգրքի 268 հոդվածի հատկանիշներով նախատեսված արարք:

Կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Դեռահասության տարիքի բնութագիրը

Սկիզբը՝ նախորդ համարում

Դեռահասության ընթացքում ձեւավորվող հիմնական միջանձնային փոխհարաբերությունները կարելի է դիտարկել երեք տեսանկյունից՝ հարաբերություններ ծնողների հետ, հարաբերություններ հասակակիցների հետ եւ վարքային հակազդումներ:

Դեռահասների վարքը հասկանալու համար առավել հատկանշական է վարքային հակազդումների ուսումնասիրումը:

1. Էմանսիպացիայի հակազդումն արտահայտվում է մեծահասակների վերահսկողությունից եւ խնամակալությունից ազատվելու ձգտմամբ: Այդ հակազդումը կարող է դրսեւորվել վարքում զուտ ներքին ապրումների տեսքով՝ չարտահայտելով մեծահասակների հետ ունեցած հարաբերություններում, կամ սեփական որոշումներով առաջնորդվելու ձգտմամբ՝ հիշեցնելով երեք տարեկանին բնորոշ համառության եւ նեգատիվիզմի երեւույթները:

2. Դեռահասների հաջորդ հակազդման տեսակը ինքնուրույն խմբերի ձեւավորումն է: Այդպիսի խմբերի առաջացման պատճառներից է դեռահասների ինքնարտահայտման պահանջը, ինչը փորձում են բավարարել հասակակիցների հետ հաղորդակցվելիս:

3. Գոյություն ունեն բազմաթիվ հոբի-հակազդումներ՝ ինֆորմացիոն-կոմունիկատիվ հոբիներ, որոնք բնութագրվում են մակերեսային շփմամբ եւ ինֆորմացիայի փոխանակմամբ: Ինտելեկտուալ-էսթետիկ հոբիների ժամանակ հետաքրքրությունն ուղղված է գործունեության բուն առարկային: Կարեւորվում է միայն գործունեության ընթացքը, իսկ արդյունքը առանձնակի նշանակություն չունի:

Հոբիներն իրականացվում են այնպիսի իրադրություններում, որտեղ դեռահասներին ընձեռվում է ղեկավարելու հնարավորություն: Դա կարող է տեղի ունենալ ինչպես պրոսոցիալ, այնպես էլ ասոցիալ խմբերում: Եսակենտրոն հոբիները նույնպես բնորոշ են դեռահասներին: Նրանք դրսեւորվում են ոչ ստանդարտ վարք՝ խմբի ուշադրության կենտրոնում հայտնվելու նպատակով:

Վարքային հակազդումները առավել ցայտուն արտահայտվում են նրանց հաղորդակցման գործընթացում: Դեռահասների շփումները շատ կարեւոր են նրանց զարգացման համար, եւ անհիմաստ են թվում միայն մեծահասակներին:

Ընբոստության հակազդումները տարրակերպ են դրսեւորվում տղաների եւ աղջիկների շրջանում: Տղաների մեջ դրանք արտահայտվում են ապակառուցողական վարքային դրսեւորումներով, իսկ աղջիկների մեջ՝ դեպրեսիվ ապրումներով:

7-9-րդ դասարաններում տարրասեռ ընկերությունը աղջիկների շրջանում համարվում է հազվադեպ հանդիպող երեւույթ, սակայն գերազանցում է տղաների տարրասեռ ընկերությունների քանակին: Դեռահասների հասունությունը դրսեւորվում է նաեւ հակառակ սեռի հասակակիցների հետ ունեցած հարաբերություններում, ինչը ոչ այնքան համակրանքի դրսեւորում է, որքան մեծահասակներից յուրացրած հարաբերությունների կրկնօրինակում:

Վտանգավոր են ծնողների եւ դեռահասների հարաբերությունների մի քանի ձեւեր՝

Հուզական լքվածություն. սովորաբար բացեիբաց չի դրսեւորվում, քանի որ ծնողները ցուցաբերում են չգիտակցված անբարյացակամություն երեխայի նկատմամբ: Երեխայի ներքին աշխարհի նկատմամբ անտարբերությունը, որը թաքնվում է թյուր հոգատարության եւ հսկողության օգնությամբ, կռահվում է երեխայի կողմից:

Հուզական քաջալերում. երեխան ընտանիքի «կուռքն» է: Սերը երեխայի նկատմամբ տագնապային է, եւ կասկածամիտ, երեխային ցուցադրաբար հեռու են պահում ցանկացած վտանգից: Քանի որ երեխայի բացառիկությունը ճանաչվում է միայն տանը, ընտանիքի անդամների կողմից, նա խնդիրներ է ունենում հասակակիցների հետ հարաբերություններում:

Ավտորիտար հսկողություն. դաստիարակությունը ծնողների ամենակարեւոր գործն է: Բայց ամենակարեւոր դաստիարակչական գիծը ի հայտ է գալիս արգելքներում եւ երեխայի մանիպուլյացիայի մեջ: Արդյունքը պարադոքսալ է. նույնիսկ եթե երեխան ենթարկվում է, միեւնույնն է, դաստիարակչական արդյունք չկա, նա չի կարող ինքնուրույն որոշումներ ընդունել: Դաստիարակության այսպիսի ձեւը հանգեցնում է կա՛մ երեխայի վարքի սոցիալապես մերժված ձեւերի ձեւավորմանը, կա՛մ ինքնագնահատականի իջեցմանը:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Թաքնվել էր Մորփեոսի գրկում

30-ամյա մի կին հաղորդում է տվել, որ 9-ամյա որդին երկու ժամ առաջ, առանց տեղյակ պահելու, դուրս է եկել տնից եւ չի վերադարձել:

Ոստիկանության ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հաղորդումից մեկ ժամ անց տղան հայտնաբերվել է... տան հյուրասենյակում տեղադրված բազմոցի հետեւից:

Տղան անուշ քնած էր:

Դասկանալի ընտանեկան բռնություն

Ոստիկանություն զանգած 61-ամյա տղամարդը հայտնում էր, թե տան անդամներն իրեն ընտանեկան բռնության են ենթարկել, ինքը արյունլվա պառկած է:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ 54-ամյա կինն է ծեծել ամուսնուն:

Տղամարդուն տեղափոխել են հիվանդանոց, որտեղ ախտորոշվել է ականջների քերծված վերքեր, կրծքավանդակի սալջարդ: Իսկ հիվանդանոցային կարեւոր արձանագրումն այն էր, որ նրա օրգանիզմում առկա էր պատկառելի քանակությամբ ալկոհոլ:

Ձկույթիկ

Ոստիկանության բաժնում հաղորդում է տվել 62-ամյա մի կին: Ըստ նրա՝ տանը 68-ամյա քույրը վիճաբանել է իր հետ, ոլորել ձեռքը՝ կոտրելով 5-րդ մատը:

Ձեռնարկվում են միջոցառումներ ավագ քրոջը հայտնաբերելու ուղղությամբ:

Խիստ համերաշխ ընտանիքներ

27-ամյա մի աղջիկ հաղորդում է տվել, որ 9-ամյա եղբորը տուն տանելու հարցի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ 25-ամյա եղբայրը եւ 46-ամյա մայրը քաշքշել եւ խփել են իրեն՝ պատճառելով վնասվածքներ:

***

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ ձեռքի կտրած-պատռած վերքով բուժօգնության է դիմել 55-ամյա մի տղամարդ:

Մեկնած ոստիկաններին նա հայտնել է, որ տանը ծագած վիճաբանության ժամանակ 20-ամյա որդին է երկաթե խողովակով խփել է ձեռքին՝ պատճառելով վնասվածք:

Բաժին հրավիրված որդին էլ հաղորդում է տվել, որ նույն վիճաբանության ժամանակ հայրը փայտով խփել է իր ուսին:

***

Ոստիկանություն զանգած 15-ամյա պատանին հայտնել էր, որ հայրն ամեն օր իրեն ծեծում եւ տնից դուրս է հանում:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ առավոտ շուտ տանը, կենցաղային հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ, 37-ամյա հայրը նախ ծեծել է կնոջը, ապա մսաղացով կոտրել երեխայի համակարգիչը:

Այս վերջին փաստն ավելի քան խոսուն է:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 34 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր սպանության եւ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 2-ը՝ ծեծի, 1-ը՝ ծեծի եւ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 1-ը՝ կողոպուտի, 3-ը՝ գողության, 1-ը՝ գողության փորձի, 2-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության, յուրացնելու կամ վատնելու եւ առեւտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու, 1-ը՝ խարդախության եւ առեւտրային կաշառքի, 2-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 2-ը՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 1-ը՝ կանխամտածված սնանկության, 1-ը՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու, 2-ը՝ խուլիգանության, 1-ը՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 6 հետախուզվող:

Արձանագրվել է 111 ճանապարհատրանսպորտային պատահար. 10 մարդ զոհվել է, 149-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 19 դեպք. 4 մարդ զոհվել է, 16-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Նոյեմբերի 4-ին Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցում «Ֆոլքսվագեն Վենտո» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 41-ամյա քաղաքացու եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

■

Նոյեմբերի 4-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան Նոր Հաճըն-Գետամեջ ճանապարհի խաչմերուկում բախվել է «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենայի. «ԿԻԱ»-ի 29-ամյա վարորդը եւ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Նոյեմբերի 4-ին Աշտարակ-Թալին ճանապարհի 2-րդ կմ-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 44-ամյա եւ 27-ամյա քաղաքացիների. նրանցից մեկը մահացել է տեղում, իսկ մյուսը՝ հիվանդանոցում:

■

Նոյեմբերի 4-ին Երեւանի Հրազդանի կիրճում «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենան բախվել է էլեկտրասյանը եւ ընկել գետը. 14-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 4-ին Երեւանի Բուռնազյան եւ Գլինկայի փողոցների խաչմերուկում «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 64-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 4-ին Երեւանի Միկոյան փողոցում իրար են բախվել «Մերսեդես», «Ֆորդ» եւ «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենաներ. «Լեքսուս»-ի 27-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 4-ին Երեւանի Գյուրջյան փողոցում անհայտ մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 55-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 5-ին Երեւանի Արցախի պողոտայում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 33-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 5-ին 23-ամյա քաղաքացին մարմնական վնասվածքներով բուժօգնության է դիմել հիվանդանոց եւ հայտնել, որ վնասվածքները ստացել է Երեւանի Ավան թաղամասում՝ անհայտ մակնիշի ավտոմեքենայի վարորդի կողմից վրաերթի ենթարկվելու հետեւանքով:

■

Նոյեմբերի 5-ին Երեւանի Հաղթանակի կամրջի վրա «ԳԱԶ-2705-744» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 25-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 5-ին Արարատի մարզի Այնթապ գյուղում «Մերսեդես Բենց C-180» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 37-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 5-ին Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոցում «Օպել Զաֆիրա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 14-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 5-ին Իջեւան քաղաքի Երեւանյան փողոցում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 14-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 6-ին Երեւան-Գյումրի ճանապարհի 44-րդ կմ-ին՝ Կոշ գյուղի մոտ, «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել դաշտում. 24-ամյա վարորդ Սարգիս Հովհաննիսյանը տեղում մահացել է, իսկ 26-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 6-ին Երեւան-Երասխ ճանապարհի 29-րդ կմ-ին իրար են բախվել «Մերսեդես» եւ «ԶԱԶ» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ի 27-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

70-ամյա մոլագարները

Այս տարիքի մարդկանց մեծամասնությունը զբաղվում է այգու խնամքով, թոռնիկների հետ է զբաղվում, բայց Ռեյ եւ Ֆեյ Քոուփլենդներին նման հեռանկարը բնավ չէր հրապուրում: Ամուսիններն ավելի «հետաքրքիր» զբաղմունք գտան՝ սպանել: Եվ տատիկ-պապիկից վերածվեցին մարդասպանների: Ամենասարսափելին այն է, որ սպանվածների հագուստներից Ֆեյը տաք ձմեռային ծածկոց էր կարում...



Նրանք առաջին մոլագար զույգը չէին եւ ոչ էլ՝ վերջինը: Բայց ամենատարօրինակն էին: Ծանոթացել էին 1940 թվականին, երբ Ռեյը քսանվեց տարեկան էր, իսկ Ֆեյը՝ տասնինը: Կես տարի անց երիտասարդներն ամուսնացան: Շուտով նրանց ընտանիքը համալրվեց. չորս տղա եւ աղջիկ ունեցան...

Երկար թափառումներից հետո Քոուփլենդների ընտանիքը հաստատվեց Միսսուրիում: Մինչ ամուսնությունը Ռեյը խնդիրներ ուներ օրենքի հետ. մեղադրվում էր անասնագողության եւ կտրոնների կեղծարարության մեջ: Ամուսնությունն էլ նրան չուղղեց. հարեւանները նրան տանել չէին կարողանում կնոջը եւ երեխաներին ծաղրելու, ստորացնելու համար: Հետագայում Ռեյը գիտակցելով, որ ավելի շատ բանտում է լինում, քան ազատության մեջ, որոշ հետեւություններ արեց եւ այլեւս իր «գործն» անաղմուկ էր անում: Այդպես սկսվեց զույգի քրեական կարիերան...

1989 թվականի օգոստոսի 20-ին Նեբրասկայի արտակարգ իրավիճակների «թեժ գծին» տարօրինակ հաղորդում ստացվեց: Ոմն Ջեք Մաքորմիկ հայտնում էր, որ որոշ ժամանակ աշխատել է տարեց ամուսինների ֆերմայում: Տերը վարձում էր թափառաշրջիկների, որպեսզի նրանք ուրիշների անասունները քշեն-բերեն իր ֆերմա: Գիտենալով, որ Մաքորմիկը տեղյակ է կատարվածից, տերը փորձել էր նրան սպանել...

Բայց մեկ այլ տեղեկություն շատ ավելին արժեր. մահափորձի ենթարկվածը հայտնում էր, որ ֆերմայի տարածքում տեսել է մարդու ոսկորներ...

Տեղեկատվությունը փոխանցվեց նահանգի պատկան մարմիններին: Իրավապահները ստացված տեղեկությունները վերլուծելուց հետո հասկանալով՝ ում հետ գործ ունեն, որոշեցին նախ համապատասխան փաստեր ու ապացույցներ հավաքել, հետո նոր խուզարկություն կատարել ֆերմայի տարածքում:



1989 թվականի հոկտեմբերի 9-ին շերիֆ Լելենդ Օ' Դելը քառասուն ոստիկանների ուղեկցությամբ հայտնվեց զույգի ֆերմայում՝ խուզարկության:

Շուրջ մեկ շաբաթ ոստիկաններին չէր հաջողվում անգամ փոքրիկ ապացույց հայտնաբերել: Միայն մեկ շաբաթ անց խորդանոցում հայտնաբերեցին երեք դիակ: Զոհերին սպանել էին ծոծրակին կրակելով: Սպանվածները քսանմեկից-քսանյոթ տարեկան երիտասարդներ էին:

Հաջորդ շաբաթ ավելի սարսափելի բացահայտումներ եղան. մեկ այլ խորդանոցում հայտնաբերեցին չորրորդ դիակը: Որոշ ժամանակ անց նշված վայրից մի փոքր հեռու հայտնաբերվեց քսանյոթամյա մի երիտասարդի դի: Երկու դեպքում էլ մահը վրա էր հասել ծոծրակին արձակված գնդակից:

Տան խուզարկության ժամանակ ոստիկանությունը հայտնաբերեց 22 մմ տրամաչափի զենք: Փորձաքննությամբ պարզվեց, որ դա նույն զենքն է, որով սպանվել էին երիտասարդները: Վարձու աշխատողներից Ռեյը ազատվել էր անմիջապես, երբ նրանց ծառայության կարիքն այլեւս չէր զգացվել: Փաստաթղթերի մեջ ոստիկանները հայտնաբերեցին վարձու աշխատողների ցուցակ՝ տասներկու անուն-ազգանուն: Բոլորի կողքին հատուկ նշան էր արված: Տասներկուսից յոթի դիակն այդպես էլ իրավապահները չկարողացան հայտնաբերել. նրանց համարեցին անհետ կորած:

Թվում էր, թե Ֆեյը տեղյակ չէ ամուսնու գործողություններից: Բայց այդպես չէր: Ցուցակը գրված էր նրա ձեռքով: Դա հաստատվեց փորձաքննության եզրակացությամբ: Բացի այդ, տանն առկա էր ծածկոցը, որը կարված էր սպանվածների հագուստներից: Նշված փաստերն ապացուցում էին Ֆեյի ներգրավվածությունը հանցագործություններին: Տատիկը լավ գիտեր՝ ինչով է զբաղված կողակիցը, բայց այդպես էլ չխոստովանեց: Մեղադրող կողմը Ֆեյին գործարք առաջարկեց արդարադատության հետ. նա կպատմի՝ որտեղ են թաղված յոթ սպանվածների դիակները եւ նրան առաջադրված մեղադրանքը կվերարակեն: Դրանից հետո հանցագործ տատիկը ճաղերի հետեւում կանցկացներ ընդամենը մի քանի ամիս: Առաջարկությունը Ֆեյը մերժեց՝ պնդելով, որ տեղյակ չի եղել սպանություններին:

Ամուսիններին մեղադրանք առաջադրվեց սպանության հոդվածի միաժամանակ հինգ կետերով: Տարեց ամուսիններին առանձին-առանձին դատեցին: Ֆեյին մեղավոր ճանաչեցին եւ դատապարտեցին մահապատժի՝ ներարկման միջոցով:

Յոթանասունհինգամյա Ռեյին նույնպես մեղավոր ճանաչեցին: Նրան սպասում էր նույն դատավճիռը, բայց գործը մահապատժի չհասավ: Ռեյը, որը փորձում էր մինչեւ դատը անմեղսունակ ձեւանալ, մահացավ բանտում՝ սպասելով իր դատավճռին, իսկ Ֆեյի դատավճիռը փոխեցին:

2002 թվականին, ինսուլտից հետո, որը նրան մասամբ անշարժության էր դատապարտել, նրան ազատ արձակեցին վատառողջության պատճառով: Մեկ տարի անց Ֆեյը մահացավ տարեցների տանը՝ ութսուներկու տարեկանում:

Արդյո՞ք Ֆեյն ամուսնու գործընկերն էր՝ մինչ օրս հաստատ չէ: Նա պատմել է միայն, որ հաճախ ամուսնու կողմից ենթարկվում էր ֆիզիկական բռնության, ինչը հաստատել են հարեւաններն ու երեխաները:

Ամուսիններն այդպես էլ ճշմարտությունն իրենց հետ գերեզման տարան...

Ծիսական սպանություններ

Խաղաղօվկիանոսյան Պապուա-Նոր Գվինեայի ոստիկանությունը քննում է ծիսական նպատակներով կատարված սերիական սպանությունը: Քննիչների տվյալներով՝ սպանություններին մասնակցել են, այսպես կոչված՝ կարգոպաշտամունքի հավատացյալները, ովքեր պաշտում են բեռնատար ավիափոխադրումները: Յոթ սպանվածները Մադանգ քաղաքի մերձակա գյուղերի բնակիչներն են, որոնց հետ հաշվեհարդար են տեսել թփեր հատող դանակով, ինչին հաջորդել է մարդակերությունը: Ոստիկանությունը գտնում է, որ ծիսական սպանությունները ամենեւին կապված չեն երկրում ընթացող պառլամենտական ընտրությունների հետ: Այն հետաձգվեց, քանի որ քաղաքամերձ բնակիչները ահուսարսափից պարզապես չէին երեւում ընտրական տեղամասերում:

ԻՏԱՌ ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ սպանությունների հետեւում գործում է լայնորեն տարածվող մի սոցիալական շարժում՝ կարգո-պաշտամունքի աղանդը (բեռների երկրպագություն կամ ինքնաթիռապաշտություն), ըստ որի՝ ժամանակակից ապրանքներն ստեղծվել են նախնիների հոգիներից եւ նախատեսված են մելանեզական ժողովրդի համար: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ, Ճապոնիայի դեմ ռազմական գործողությունների ընթացքում կղզու վրա իջեցվեցին վիթխարի քանակությամբ բեռներ՝ հագուստ, վրան, զենք, պահածոներ, որոնք նախատեսված էին կղզիաբնակների ու զորքերի ապահովման համար եւ արմատապես փոխեցին բնիկների կյանքը: Պատերազմի ավարտին օդային զինված ուժերի բազան չքվեց, սակայն տեղաբնակների՝ աստվածային ծագմամբ ապրանքների նկատմամբ ֆանտաստիկ հավատը խորացավ:

Որպեսզի նորից ստանան կարգո եւ տեսնեն ընկնող պարաշյուտներ, ինքնաթիռներ կամ բեկված նավեր՝ կղզիաբնակները բեմականացրին զինվորների, նավաստիների եւ օդաչուների գործողություններ: Փայտից պատրաստեցին ականջակալներ, հսկիչ-դիսպետչերական աշտարակներ տեղադրեցին ծառերին, թռիչքուղի եւ ազդանշանային համակարգ ստեղծեցին, փարոս եւ ջահեր վառեցին՝ լուսավորելու գոտին: Կարգո-պաշտամունքի անդամները հավատում են, որ իրենց շինությունները եւ կեղծակերպումները կգայթակղեն բեռնատար ինքնաթիռներին, որոնց համարում են հոգիների սուրհանդակներ:

Ինչպես պատմել են իրենք՝ քսանինը կալանավորվածները, որոնց թվում՝ տասներեքամյա մի պատանի, սպանության պատճառը կախարդությունն էր. զոհերը՝ հինգ տղամարդ եւ երկու կին, իբր զբաղվում էին «սեւ» մոգությամբ, հոգիներ էին ուղղորդում գտնելու կախարդներին:

«Անդրազգային» թմրաշղթան բացահայտվեց

Տաջիկստանի Հանրապետության քաղաքացի Թոլիբ Պ.-ն վերջին տարիներին բնակվում էր Երեւանում: Թե որ քամին էր նրան բերել մեր երկիր, այնքան էլ պարզ չէ, բայց մեկ տարի առաջ Թոլիբն օրհնեց այն օրը, երբ եկավ Հայաստան ու մե՜ծ փողեր աշխատելու հնարավորություն ունեցավ:

«Բիզնեսը» ծաղկում էր, «թմրաշխարհում» Թոլիբը «դեմք» էր դառնում, բայց հայ իրավապահները նրա գործին քար գցեցին, ու հիմա Թոլիբին յոթից տասնհինգ տարի ժամկետով ազատազրկում է սպառնում: Ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատուկ կարեւոր գործերով քննության վարչության կողմից Թոլիբ Պ.-ին առաջադրված մեղադրանքը քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով է: Քրեական գործն ուղարկվել է դատարան, որտեղ էլ կվճռվի Թոլիբի հարցը:

Նշենք, որ նախկինում նույն հոդվածով ազատազրկման դատապարտված Թոլիբ Պ.-ն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել՝ բերելով անհիմն ու անհեթեթ պատճառաբանություններ, որոնց նպատակը քրեական պատասխանատվությունից խուսափելն է: Իսկ նրա հանցանքը նախաքննական մարմինն ապացուցել է հիմնավորապես:

Թոլիբի՝ Երեւան գալու պատճառն անհայտ է կամ, գուցե, հենց «թմրամիջոցի գործով» զբաղվելն էր, ինչն էլ նա հաջողությամբ սկսեց:

Ամիսներ առաջ Թոլիբը զանգեց Իրանում բնակվող ծանոթին՝ Մոհամմադին, եւ պարտքով փող խնդրեց: Մոհամմադը մերժեց, բայց գայթակղիչ առաջարկություն արեց՝ զբաղվել ափիոնի «գործով». ինքը ծանոթի՝ Ալիի միջոցով թմրամիջոց կուղարկի Հայաստան, իսկ Թոլիբը կզբաղվի դրա իրացմամբ: «Մեծ» փողերի հոտ էր գալիս, եւ Թոլիբն անմիջապես համաձայնեց:

Օրեր անց երկու կիլոգրամ ափիոնը բարեհաջող «հատեց» հայ-իրանական սահմանն ու հայտնվեց Թոլիբի մոտ: Մոհամմադից գրամը տասը դոլարով ձեռք բերած ափիոնը Թոլիբը ոմն Կախայի միջոցով իրացրեց ոմն Ջազայի, բայց՝ արդեն գրամը քսաներկու դոլարով:

Հաջող ավարտը նոր գործի սկիզբն էր. Թոլիբն ու Մոհամմադը հերթական հեռախոսազրույցն ունեցան, հերթական պայմանավորվածությունը ձեռք բերեցին: Մեկ կիլոգրամ 800 գրամ ափիոնը, այս անգամ արդեն ոմն Ալիջոնլուի միջոցով, հասավ Երեւան ու «հանգրվանեց» Թոլիբի վարձակալած բնակարանում:

Նախնական պայմանավորվածություն կար. Կախան ստացավ 700 գրամ ափիոն, գրամը՝ 22 դոլարով, ու տեղափոխեց Վրաստան, մնացած ափիոնը Թոլիբն իրացրեց «հայաստանյան» շուկայում:

Փաստով հարուցված քրեական գործով անցնող մեղադրյալները հինգն են. Թոլիբ Պ.-ից բացի՝ քրեական օրենսգրքի 266 եւ 268 հոդվածների հատկանիշներով մեղադրանքներ են առաջադրվել նաեւ Իրանի քաղաքացի Սաիդ Միլանիին եւ Հայաստանի քաղաքացիներ Վաղինակ Խաչատրյանին, Արգամ Ալեքյանին ու Կարո Բաղյանին:

Այս շղթայում Թոլիբի մտերիմը Վաղինակ Խաչատրյանն է: Նա ժամանակ առ ժամանակ ապրում էր տաջիկ ընկերոջ վարձակալած բնակարանում, եւ նրա միջոցով էր Թոլիբը թմրամիջոցն իրացնում հայ «պահանջատերերին»:

Վաղինակը Թոլիբի հետ մտերմությունից շահում էր. նախ թմրամիջոցի պակասից ուղեղը չէր «տանջում», երկրորդ՝ իրացնելուց էլ օգուտ ուներ: Այդպես, 200 գրամ ափիոնը՝ գրամը՝ տասներկու դոլարով, իրացրեց ոմն Լյովայի, Արոյի ու Անդոյի:

Քրեական գործի մյուս «հերոսը»՝ Արգամ Ալեքյանը, Թոլիբին թույլ էր տվել թմրամիջոցը թաքցնել իր ավտոտնակում: Փոխարենը՝ նրանից ստացել էր քսան գրամ ափիոն՝ իր գործածման համար:

Կարո Բաղյանը նույնպես թմրամոլ է: Նրան «Թոլիբի գործի» մեջ ներգրավողը Արգամն էր. ընկերները մեկմեկու կարիքները լավ էին հասկանում ու «դարման անում»: Արգամն, օրինակ, Կարոյին Թոլիբի ափիոնից էր հյուրասիրում, իսկ Կարոն նրան՝ ոմն Ազիզից ձեռք բերած մարիխուանայից: Ընկերությունն՝ ընկերություն, հյուրասիրությունը՝ հյուրասիրություն, բայց մի օր էլ հարկավոր էր վճարել «բարիքի» համար: Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության աշխատակիցների հետ նրանց «հանդիպումն» էլ հենց այդ ժամանակ եղավ, երբ պատրաստվում էին մեկմեկու թմրամիջոց փոխանցել:

Քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով հարուցված քրեական գործի նախաքննությունն ավարտվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Թմրաշրջանառություն

Հոկտեմբերի լույս 23-ի գիշերը ոստիկանության Ծաղկինի բաժնի քրեական հետախույզները, ապօրինի թմրամիջոց պահելու կասկածանքով, Ծաղկին-Ակունք ճանապարհից բաժին բերման ենթարկեցին Ռուսաստանի Դաշնության 53-ամյա քաղաքացու՝ իր վարած «Օպել» մակնիշի մեքենայով:

Նա մեքենայի բեռնախցիկից ներկայացրեց 46 հատ «Տրիֆտազին», 27 հատ «Լեւոմեպրոմազի» եւ 19 հատ «Ազալեպտին» գրառումներով հոգեմետ հաբեր:

Հոկտեմբերի 23-ին ոստիկանության Մուշի բաժնի քրեական հետախույզները Գյումրիի Օզանյան փողոցից, ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով, բերման ենթարկեցին Հանիսօղլյան փողոցի 54-ամյա մի բնակչի: Անձնական խուզարկությամբ ոստիկանները նրա գրպանից տեմպալգին, ասպիրին եւ պարացետամոլ դեղահաբերից բացի, հայտնաբերեցին նաեւ պոլիէթիլենային տոպրակով տարբեր չափերի, 5 կտոր սպիտակ դեղահաբ եւ փոշենման զանգված:

Ըստ բերման ենթարկվածի՝ պոլիէթիլենային տոպրակում հայտնաբերվածը մեթադոն է, պահում էր իր օգտագործման համար:

Փաստերի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Ակնոցներ էր հափշտակել

Հոկտեմբերի 23-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում էր ստացվել, որ գիշերը տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել են Կոմիտասի պողոտայի օպտիկայի խանութի դուռն ու գողացել 206 ակնոց:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները գողությունը կատարած անձանց եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեցին: Տեղեկություններ ստացվեցին, որ նշված գողությունը հնարավոր է կատարած լինի Արամ Խաչատյան փողոցի 19-ամյա մի բնակիչ՝ մշտական բնակության վայր չունեցող անչափահաս ընկերոջ հետ:

Ստացված տեղեկություններն իրացնելով՝ հոկտեմբերի 25-ին քրեական հետախույզները 19-ամյա երիտասարդին հայտնաբերեցին եւ ներկայացրին քննչական բաժին:

Նա տվել է խոստովանական ցուցմունք եւ ներկայացրել գողոնը:

Ձեռնարկվում են միջոցառումներ մյուս մասնակցին հայտնաբերելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Իրավաբանական խորհրդատվություն

Հարց - *Ո՞ր դեպքերում է ամուսնալուծությունը կատարվում դատական կարգով:*

Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝

ա) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը,

բ) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց,

գ) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով:

Ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանը իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու ամուսիններին հաշտեցնելու համար եւ իրավունք ունի գործի քննությունը հետաձգելու՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչեւ երեքամսյա ժամկետ: Այս դեպքում ամուսնալուծությունը կատարվում է, եթե ամուսինները (նրանցից մեկը) պնդում են ամուսնալուծվելու համար:

Ամուսնալուծության համար ամուսինների փոխադարձ համաձայնության առկայության դեպքում դատարանը լուծում է ամուսնությունը ամուսինների կողմից ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

Հարց - *Ամուսնալուծվելիս ամուսինների միջեւ ծագող վեճերն ինչպե՞ս են քննարկվում:*

Դատական կարգով ամուսնալուծվելիս, ինչպես եւ անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնալուծվելիս ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետ են ապրելու երեխաները, երեխաներին եւ (կամ) անաշխատունակ անապահով ամուսնուն պահելու համար ապրուստի միջոցները հոգալու կարգի, այդ միջոցների չափերի կամ ամուսինների ընդհանուր գույքի բաժանման մասին:

Ամուսինների միջեւ համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է՝

ա) որոշել, թե ամուսնալուծությունից հետո ծնողներից ում հետ պետք է ապրեն երեխաները,

բ) որոշել, թե որ ծնողից եւ ինչ չափով պետք է ալիմենտ (ապրուստավճար) բռնագանձվի,

գ) ամուսինների (ամուսիններից մեկի) պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանումը,

դ) ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող մյուս ամուսնու պահանջով որոշել այդ միջոցների չափը:

Եթե գույքի բաժանումը շոշափում է երրորդ անձանց շահերը, ապա դատարանը կարող է գույքի բաժանման մասին պահանջն առանձնացնել որպես առանձին վարույթ:

Հարց - *Ո՞ր պահից է ամուսնությունը համարվում դադարած:*

Ամուսնությունը, որը լուծվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնում, համարվում է դադարած ամուսնալուծության պետական գրանցման պահից:

Ամուսնությունը, որը լուծվում է դատական կարգով, համարվում է դադարած դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Դատարանն ամուսնալուծության մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում պարտավոր է այդ վճռի քաղվածքն ուղարկել ամուսնության պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

Դատական կարգով կատարված ամուսնալուծությունը ենթակա է պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ամուսնալուծված ամուսինների նոր ամուսնության պետական գրանցում չի կատարվում առանց ամուսնալուծության վկայականի առկայության:

Դատարանի կողմից մահացած կամ անհայտ բացակայող ճանաչված ամուսնու ներկայանալու եւ դատարանի համապատասխան վճռի վերանայման դեպքում ամուսինների համատեղ դիմումի հիման վրա ամուսնությունը կարող է վերականգնել քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինը, բացառությամբ այն դեպքերի, երբ մյուս ամուսինը սահմանված կարգով նոր ամուսնություն է կնքել:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

«Իմ տունն իմ ամրոցն է»

Վերջին տարիներին բնակարանային գողությունները մեծ խնդիր են դարձել մեր քաղաքացիների համար: Սա, թերեւս, այն հանցատեսակներից է, որն «արդիական» է տարվա բոլոր եղանակներին: Իհարկե, ամենաթեժ շրջանն ամառն է, բայց քիչ չեն նաեւ աշնանը կատարվող դեպքերը: Այն հանցատեսակներից է, որոնք կանխարգելելն ավելի դյուրին է, քան բացահայտելը: Իսկ երբ քաղաքացին իր հետ կատարվածի մասին խուսափում է կամ չի հայտնում ոստիկանություն, ապա այդ հանցատեսակին նախապատվություն տվողների այցելությունների շարքը երկար է ձգվում:

Հաճախ մարդիկ իրենց գույքի անվտանգությունը վստահում են միայն փականներին: Ցանկացած կացարան, որքան էլ ապահովված լինի ամենաժամանակակից մեխանիկական կամ էլեկտրոնային փականներով, միեւնույն է՝ խոցելի է: Իսկ այդ հանգամանքից միշտ էլ օգտվողներ կգտնվեն:

Չբնակեցված տուն մուտք գործելու համար բնակարանագողերը նախ բավական ժամանակ են ունենում եւ կարող են հանգիստ շարքից հանել «ամենաապահով» փականներն ու հաղթահարել մյուս խոչընդոտները: Տանտիրոջ բացակայությունը ուժ ու ինքնավստահություն է տալիս ոչ միայն փորձառու բնակարանագողերին, այլեւ սկսնակներին: Տանտերերի բացակայության մասին կարող են վկայել որոշ տեսանելի մանրամասներ, իսկ բնակարանագողերն այդ հանգամանքը հաստատելու համար օգտվում են պարզունակ միջոցներից՝ օրվա ընթացքում մի քանի անգամ դուռը թակելով, հարեւաններից հարցուփորձ անելով եւ այլն: Տանտերերի բացակայության ընթացքում տան անվտանգության կարեւորագույն երաշխավորներից մեկը տեղեկատվական պաշտպանվածությունն է. անհրաժեշտ է, որ շրջապատում քչերը տեղյակ լինեն ձեր տեւական բացակայության մասին, իսկ վստահելի հարեւաններն ու հարազատները, հակառակը՝ տեղեկացված լինեն:

Կացարանի անվտանգությունն ապահովելու լավագույն միջոցներից մեկը ձեր բացակայության ընթացքում այն ժամանակավորապես բնակեցնելն է. խնդրեք հարազատներից կամ ծանոթներից մեկին՝ որոշ ժամանակ բնակվել կամ գոնե գիշերել ձեր տանը: Եթե նման հնարավորություն չկա, կարելի է տան բանալիները վստահել հարեւանին եւ խնդրել ժամանակ առ ժամանակ խնամել բույսերը: Հաճախակի ելումուտը բնակարանագողի համար տպավորություն կստեղծի, որ կացարանի «բնակեցվածությունը» բնական հունի մեջ է: Ուրիշներին հոգս չպատճառելու համար ոմանք դիմում են նաեւ «խորամանկ» միջոցների. բնակարանում տեղադրում են էլեկտրոնային ժամանակային ռելեներ, որոնք ժամանակ առ ժամանակ միացնում են տան լույսերը, ցանկալի է նաեւ ինքնակառավարվող ցանցին ռադիոընդունիչ միացնել:



Առանձնատների դեպքում անհրաժեշտ է տան հարակից տարածքից հեռացնել բոլոր այն պարագաները, որոնք կարող են հեշտացնել բնակարանագողերի գործը. խոսքը տվյալ դեպքում վերաբերում է աստիճաններին, նստարաններին, տակառներին, այգեգործական պարագաներին եւ այլն: Ավտոտնակը, խորդանոցը եւ առանձնատանը կից մյուս շինությունները նույնպես պետք է հուսալի կողպված լինեն, որպեսզի հանցագործները հնարավորություն չունենան ձեր իսկ գործիքների օգնությամբ թալանել ձեր կացարանը:

Տեւական ժամանակով տնից բացակայելիս ցանկալի է թանկարժեք իրերը հանձնել հարազատներին. այդ առումով առավել ապահով են բանկերի պահախցերը, որոնց համար, ճիշտ է, ստիպված կլինեք վճարել, սակայն հիշեք, որ հուսալի անվտանգությունը անվճար չի լինում: Տան թաքստոցներն այնքան էլ հուսալի չեն, քանի որ բնակարանագողերը հիանալի կարողանում են հայտնաբերել ցանկացած թաքստոց եւ առաջին հերթին՝ փող ու ոսկի կփնտրեն հենց ձեր նախընտրած թաքստոցում:

Նախկինում մասնագետները խորհուրդ էին տալիս նախապես արտագրել էլեկտրոնային սարքերի սերիական համարները, լուսանկարել հնաոճ եւ թանկարժեք իրերը, որպեսզի հետագայում, եթե հափշտակության զոհ դառնաք, կարողանաք ձեր տիրապետած տեղեկատվությամբ օգտակար լինել իրավապահներին եւ հանցագործության բացահայտման ժամանակ գողոնի մեջ հեշտությամբ տարբերեք ձեր իրերը: Հիմա էլ կարելի է այդ մեթոդը կիրառել: Որոշ հնարամիտ քաղաքացիներ նույնիսկ գրություն են թողնում տանը՝ հասցեագրված բնակարանագողերին, որ տանը փող չկա, իսկ թանկարժեք իրերը այլ վայրում են թաքցված: Սա էլ հետաքրքիր մոտեցում է: Չնայած, եթե բնակարանագողը ներխուժել է բնակարան, ապա տանելու ինչ-որ բան կգտնի:

Ոմանք գողերի հանդեպ ատելությամբ լցված՝ իրենց բնակարաններում կամ առանձնատներում անցանկալի հյուրերի համար խիստ վտանգավոր թակարդներ են պատրաստում. էլեկտրական հոսանք, թունավորված ըմպելիք եւ այլն: Այս կարգի «հնարամիտներն» իրենց բնակարանի անվտանգությունն ապահովելով՝ իրենք են հայտնվում հանցագործի կարգավիճակում: Եվ վերջում՝ մի քանի պարզ խորհուրդ. բնակարանից հեռանալուց առաջ մեկ անգամ եւս ստուգեք՝ բոլո՞ր պատուհաններն ու դռներն են հուսալի փակված, ներսից պատուհանների եւ դռների հետեւում այնպիսի առարկաներ դրեք, որ դրանց բացվելու դեպքում աղմուկ բարձրանա, բնակարանագողերին մոլորության մեջ կարող է գցել չհավաքված լվացքը:

Փաստենք, որ ներկայումս բնակարանների եւ առհասարակ ցանկացած շինության անվտանգության ամենաապահով ու օրինական միջոցը դրանց պահպանումը հատուկ մասնագիտացված կառույցներին վստահելն է, ինչպիսին է, օրինակ, ոստիկանության պահպանության վարչությունը, որը մատչելի վճարով տրամադրում է ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցված եւ հուսալի պահպանություն:

Անչափահասը եւ մեքենան

Ըստ վիճակագրության՝ վթարների զգալի մասը տեղի է ունենում մեքենա վարելու մինչեւ երեք տարվա փորձ ունեցողների մեղքով: Ռուսաստանում, օրինակ, չնայած մինչեւ 19 տարեկան վարորդների քանակը 7% է, նրանց մասնակցությամբ վթարների մասնաբաժինը մոտ 15% է:

Անչափահասների դեպքում անփորձությունն, ավաղ, միակ բացասական կողմը չէ: Երիտասարդներն ավելի տաքարյուն են, ու, բացի այդ, նրանց մեջ հաճախ բացակայում է պատասխանատվության զգացումը: Վիճակագրությունը վկայում է նաեւ՝ որքան շատ հասակակիցներ են գտնվում մեքենայում, այնքան մեծանում է վթարի հավանականությունը, ինչը բացատրվում է ընկերների մոտ պարծենալու հանգամանքով:

Վիճակագրության համաձայն՝ երիտասարդ վարորդների մասնակցությամբ վթարներն առավել ծանր հետեւանքներ են ունենում, քանզի նրանց գործողությունները հաճախ անկանխատեսելի են ու ռիսկային: Անչափահաս վարորդները հիմնականում վթարի են ենթարկվում արագությունը գերազանցելու եւ կոպիտ խախտումների հետեւանքով:

Տարբեր երկրների մասնագետները վաղուց են վիճարկում այն հարցը, թե որ տարիքից մարդը կարող է մեքենա վարելու իրավասությամբ օժտվել: Վերջին տարիներին երիտասարդ վարորդների մասնակցությամբ վթարների ավելացումը շատ երկրների օրենսդիրների ստիպել է վերանայել իրենց մոտեցումները:

Օրինակ, ԱՄՆ-ում վերջերս առավել հաճախ է օրակարգում հայտնվում վարորդական իրավունքի վկայականները 21 տարեկանից տրամադրելու հարցը:

Ճանապարհային երթեւեկության անվտանգության ամերիկյան ազգային ադմինիստրացիայի ուսումնասիրություններով պարզվել է, որ այն նահագներում, որտեղ երիտասարդ վարորդների համար կանոնները խստացվել են, նկատվել է պատահարների կտրուկ նվազում, իսկ որոշ նահանգներում արգելվում է անչափահասի կողմից գիշերվա ժամերին կամ միայնակ մեքենա վարելը:

Մի քանի խորհուրդ ծնողներին:

Խուսափեք դեռեւս վարորդական իրավունք չստացած անչափահասին մեքենայի ղեկը վստահելուց. եթե նույնիսկ նա վարելու է ձեր ներկայությամբ:

Ձեր զավակների ներկայությամբ խուսափեք կանոնները խախտելուց եւ աշխատեք լավ օրինակ ծառայել, քանզի ծնողների օրինակը երեխաների համար շատ ավելի ընդունելի է:

Պնդեք, որ վարելու իրավունք ստացած ձեր զավակները մեքենան վարելիս ամրագոտիներ օգտագործեն (ծանր հետեւանքներով պատահարների կեսից ավելիի դեպքում անտեսվել են անվտանգության այդ կարեւորագույն համակարգերը):

Ձեր զավակներին հաճախ հիշեցրեք, որ ավտոմեքենան փոխադրամիջոց եւ շքեղություն լինելուց զատ՝ նաեւ մշտական վտանգի աղբյուր է, հնարավորության դեպքում արգելեք օրվա մութ ժամերին մեքենա վարելը, ժամանակ առ ժամանակ երթեւեկեք նրանց հետ՝ մեկ անգամ եւս համոզվելու, որ լիովին տիրապետում են մեքենա վարելու հմտություններին:

Կարծես երեկ էր, որ ձեր երեխան աղմկոտ խաղում էր խաղալիք մեքենաներով ու երթեւեկում եռանիվ հեծանիվով, իսկ արդեն հասունության շեմին ուզում է հետ չմնալ կյանքի զարգացումներից: Մասնավորապես՝ ցանկացած պատանի երազում է ժամ առաջ հայտնվել մեքենայի ղեկի մոտ: Դա նրա համար ինքնահաստատման յուրօրինակ միջոց է: Ծնողներից շատերը բավարարելով երեխաների ցանկությունը՝ չեն էլ գիտակցում, թե ինչ վտանգի են ենթարկում իրենց զավակներին:

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Նոյեմբերի 1-ին ոստիկանության Շենգավիթի բաժնի ՔՀԲ ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ բաժին բերման է ենթարկվել 51-ամյա մի տղամարդ, որը 2016 թ. մարտից հետախուզվում էր Ֆրանսիայի քրեական օրենսգրքի մի շարք հոդվածների մեղադրանքով:

◆

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության եւ Արագածի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների արդյունքում նոյեմբերի 1-ին Օշական գյուղում հայտնաբերվել եւ ոստիկանության Արագածի բաժին բերման է ենթարկվել 31-ամյա մի տղամարդ, որը ոստիկանության Վաղարշապատի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 333 հոդվածի (սուտ մատնությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Գուգարքի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 1-ին բաժին բերման է ենթարկվել 43-ամյա մի տղամարդ, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 147 եւ 185 հոդվածների մեղադրանքով՝ դատաքննությունից խուսափելու համար:

◆

Նոյեմբերի 2-ին ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները Երեւանի Հաղթանակ թաղամասից բերման են ենթարկել 56-ամյա Եփրեմ Ե.-ին, որը ոստիկանության Շենգավիթի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 34-177 հոդվածի (գողության փորձը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Մալաթիայի բաժնի քրական հետախույզները նոյեմբերի 2-ին, Երեւանի Ռ. Մելիքյան եւ Օտյան փողոցների խաչմերուկից բերման են ենթարկել 31-ամյա Դավիթ Պ.-ին, որը հետախուզվում էր ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի կողմից՝ քրեական օրենսգրքի 118 հոդվածի (ծեծը) մեղադրանքով:

◆

Նոյեմբերի 2-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել 45-ամյա Արամ Մ.-ն, որը 2018 թ. մայիսից հետախուզվում էր ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի մարզի Սոչի քաղաքի իրավապահների կողմից՝ ՌԴ քրեական օրենսգրքի 158 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

◆

Նոյեմբերի 2-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել Թուրքիայի Հանրապետության քաղաքացի Սադետտին Ի.-ն, որը 2011 թ. հունիսից ՌԴ ՆԳՆ Մոսկվայի մարզի իրավապահների կողմից հետախուզվում էր ՌԴ քրեական օրենսգրքի 264 հոդվածի մեղադրանքով:

◆

Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի քրեական հետախույզների եւ համայնքային ոստիկանների բացատրական աշխատանքների շնորհիվ նոյեմբերի 3-ին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին է ներկայացել 53-ամյա Ռոկո Պ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 185 հոդվածի (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Գիտություն
«Տարտյուֆ» / Հայկ. խաղողի տեսակ
Նավասյուն / Իոսիպ Բրոզ ...
... պարիսպ / Կտորեղեն
... ուսուցում / Տուրգենեւ, վեպ
Մաքուր, անբիծ
Շախմատի խաղաքար / Վերիսկող անձ
Աֆրիկյան երկիր / Միապետ
Ոտնաչափ / Դեղանյութ
Վիներ / Կրոնավորի զգեստ
Նոտա / Լեռ Վանա լճի ափին
... Կոռլեոնե / Էմիլ ...
Կանադացի կին գրող
Փոցխ, գերանդի
Չեխ երգահան / Հռենոսի վտակ
1918 թ. ճակատամարտ
... Միխալկով / Ուրարտ. աստված
Հատկանիշ / Հնում հեծյալ զինվոր
... Ռիվզ
Առասպել. չար էակ
Գետ, Հար. Ուրալ
Աստղաբաշխութ. մուսան
Շինանյութ / Իսպանիայի հին անունը
Տուպոլեւ
Անձն. դերանուն



Իտալացի նկարիչ / Մարոկկոյի բնակիչ
Խոտակեր կենդանի
Հացամթերքի ձեռնարկություն
Քաղաք, Չինաստան / Կոնֆետ
Եվրոպական լեզու / Անգույն հեղուկ
«Իմ ընկեր ...ն» / Երգեցիկ թռչուն

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«Դոն ...» / Սափոր
Քառագագաթ լեռ
... կաթին
Հնդիկ շախմատիստ
Հավաքույթ / «Չար ...»
Արեւադարձ. ծառ
Ստեղծագործություն
Հռոմ. պատմագիր / Թակարդ
Մոլորակ / Կերկ, Մայքլ ...
... սթեռլինգ / Թաղամաս, Երեւան
Պահածոյացված միս
«Ժիզել» / Բկաբորբ
Նահանգ, ԱՄՆ / Ավանդ, պատգամ
Ռիխարդ ...
Իսպան. գրող / Պոմիդոր
Թանաքաձուկ / Ֆուտ. աշխ. կրկն.չեմպիոն
Ընդեղեն
... Թուրման / Եկեղեցու դպիր
Ականջող
Ֆա, սոլ / Եմեն / Մշուշ
... Ռոլան / Առնետ
Ս. Տեր-Պետրոսյան / Չբացված ծաղիկ
Ներքին նշանակություն / Անգլ. քանդակագործ
Դիցամայր / Մահմեդ. աղոթք
Ամբողջ տպագիր արտադրանքը
Գերման. քաղաք / Ասորական թագուհի
Մարտակից
«Մարտին ...»
Ուռիների պուրակ
Մոզամբիկ
Տիցիան, նկար / Վառելանյութ
Չկան շնչառական օրգան
Երգիծանքի տեսակ
Տարեցույց
Մշակվում է մորթուց
Գավառ, Մեծ Հայք

Ապրիլ 08.11 - 14.11

Խոյ - Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպես եք արձագանքում հանգամանքների փոփոխությանը, ընտրում եք՝ հարմարվե՞լ, թե պայքարել:

Ցուլ - Կարեւոր է ժամանակին հասկանալ, թե ինչի վրա պետք է ծախսել ձեր ուժերը

Երկվորյակ - Պետք է հաղթահարեք բավական բարդ փորձությունները, ընդ որում, երբեմն՝ միայնակ:

Խեցգետին - Աշխատասիրությունն ու համառությունը կօգնեն ձեզ հաջողության հասնել այնտեղ, որտեղ մյուսները հանձնվել են:

Առյուծ - Հարմար ժամանակ է անցյալի իրադարձությունները քննարկելու, եզրակացություններ անելու համար:

Կույս - Բարեն-պաստ շաբաթ է կարեւոր եւ պատասխանատու աշխատանքի համար: Կարելի է իրականացնել վաղուց մտածածը:

Կշեռք - Ձեր լավատեսությունը շատերին դուր է գալիս: Մարդկանց հետ լեզու գտնելու կարողությունը կարող է օգտակար լինել:

Կարիճ - Լարված պահերին ձեզ չեք կորցնում, կարող եք փոխել իրավիճակը դեպի լավը:

Աղեղնավոր - Հոգու խորքում կուրախանաք, որ պետք եք շրջապատին որպես մասնագետ եւ մարդ:

Այծեղջյուր - Հեշտությամբ կկատարեք ինքնուրույն մտածողություն եւ օրիգինալ մոտեցում պահանջող աշխատանքները:

Ջրհոս - Ցանկացած պարագայում կփորձեք չբավարարվել ձեռք բերածով, կցանկանաք առաջ շարժվել:

Ձուկ - Մի հետաձգեք գործերը, փորձեք հասնել լավագույն արդյունքների:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.c1-b2 d8:d4 2.c3:e1x

Խնդիր N2 1.g1-h2 f8:h4 2.f4-g5 h6:f4 3.g3:e1x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու
Հայաստանի չեմպիոն,
IDF վարպետ,
սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 07.11.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: